

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ԵԱԳԵԼՈՆԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՊԱՅՈՒՈՂ ՄԻ ՁԵՌԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Փիրուզա Մնացականեան

Դեռևս 2010 թ. ապրիլին Կրակովի Գիտութիւնների ակադեմիայում հանդէս եկայ լեհահայոց գաղթավայրերում ընդօրինակուած հայկական ձեռագրերի վերաբերեալ գիտական զեկոյց-հաշուետուութեամբ, որը հիմնուած էր մի շարք ձեռագրացուցակների տուեալների վրայ: Աւելի ուշ Եազելոնեան համալսարանի պրոֆէսոր Քշիշտոֆ Ստոպկան ինձ փոխանցեց Կրակովի Եազելոնեան գրադարանի ձեռագրերի բաժնի աւանդապահ տիկին Աննա Սոբանսկայի խնդրանքը՝ կապուած իրենց պահոցում գտնուող մի ձեռագրի հետ: Ձեռագիրը Մաշտոց էր: Պահպանուած յիշատակարանը տեղեկացնում էր, որ այն ընդօրինակուել է 1493 թ. Եահայուենաց Կուքի աւանում Մանուէլ գրչի կողմից: Գրադարանին անհրաժեշտ այս կարգի նախնական տեղեկութիւններ փոխանցելուց յետոյ Երեւան վերադառնալու պատճառով չհասցրեցի մանրամասն գրառումներ կատարել:

2010 թ. սեպտեմբերի 25-ին Կրակովի Եազելոնեան գրադարանում հանդիսաւորութեամբ նշուեց Հայ մշակութային ընկերութեան հիմնադրման 20-ամեակը: Ձեկոյցներով հանդէս եկան լեհահայ եւ լեհ մի շարք գործիչներ, համայնքի ակտիւ անդամներ: Միջոցառման շրջանակներում Եազելոնեան գրադարանի ձեռագրերի բաժնի ընթերցասրահում տեղի ունեցաւ հայկական ձեռագրերի եւ հնատիպ գրքերի մէկօրեայ ցուցահանդէս: Ներկայացուած էին Եազելոնեան գրադարանի որոշ հայկական նիւթեր՝ 7 ձեռագիր եւ 5 հնատիպ գիրք: Գտնուելով Կրակովում եւ անձամբ ներկայ լինելով միջոցառմանը՝ հնա-

րաւորութիւն ստացայ լրացնելու վերոյիշեալ Մաշտոցի նկարագրութիւնը: Ձեռագրին ծանօթանալու դեռևս առաջին առիթի ժամանակ տիկին Սոբանսկայից ստացել էի տուեալ ձեռագրի վերաբերեալ նրա ունեցած տեղեկութեան միակ աղբիւրը՝ Նիկողայոս Քարամեանցի Բեռլինի կայսերական գրադարանի հայկական ձեռագրերի ցուցակից մէկ էջ¹: Ներսիսեան վարժարանի շրջանաւարտ Ն. Քարամեանցը, ով Գերմանիա էր մեկնել կրթութիւնը շարունակելու նպատակով, նախքան վերոյիշեալ ձեռագրացուցակի լոյս ընծայելը, «Բագմավէպում» հրատարակում է նոյն գրադարանում պահուող հայկական ձեռագրերի համառօտ նկարագրութիւնը²: Սակայն «Բագմավէպի» յօդուածում տուեալ Մաշտոցի վերաբերեալ Ն. Քարամեանցի նկարագրութիւնը խիստ համառօտ էր: Նշուած էր միայն ձեռագրի գոյքահամարը՝ 336, անունը՝ Մաշտոց, եւ մի հատուած յիշատակարանից³: Մաշտոցի նկարագրութիւնը, ըստ այսօրուայ ընկալման, ամբողջական էր նաեւ 1888 թ. առանձին աշխատութեամբ հրատարակուած ձեռագրացուցակում: Կար անգամ տարեթուի հետ կապուած տպագրական բնոյթի վրիպակ, մասնաւորապէս՝ 100 տարով աւելացուած էր Մաշտոցի ընդօրինակման տարեթիւն ու յետագայ յիշատակարանի թիւը⁴: Հայ մա-

1 N. Karamianz, Die Handschriften-Verzeichnisse Königlichen Bibliothek zu Berlin, Berlin 1888.
 2 Ն. Քարամեանց, Յուցակ Պետլիցի արքայական Մատեմատիկայի հայ ձեռագրաց, «Բագմավէպ» 1886, էջ 183-84:
 3 Նոյն տեղում, էջ 183:
 4 N. Karamianz, Գ2. աշխ., էջ 47:

տենագիտութեան մէջ Ն. Քարամեանցի ձեռագրերի նկարագրման նախաձեռնութիւնը դասուում է այս ուղղութեամբ արուած անդրանիկ փորձերի շարքը: Բացի այդ, դեռ լոյս չէր տեսել Հ. Յ. Տաշեանի՝ յետագայ ձեռագրագէտների համար ուղեցոյց եւ դասական օրինակ հանդիսացող ձեռագրացուցակը, որի վրայ կը կարողանար յենուել Քարամեանցը իր նկարագրութեան ժամանակ:

Այսպիսով՝ բնական հետաքրքրութիւն առաջացաւ՝ պարզելու, թէ ինչպէս եւ երբ է Բեռլինում պահուող Մաշտոցը յայտնուել Կրակովի Եազելոնեան գրադարանի ձեռագրերի շարքում: Այդ նպատակով հարցում կատարեցի լեհական կողմին՝ խնդրելով մատնանշել նիւթեր, որոնք կօդնէին ինձ: Անմիջապէս նամակ ստացայ տիկին Սոբանսկայից, որով նա տեղեկացնում էր, որ ինձ հետաքրքրող Մաշտոցը, այսպէս կոչուած, «Բեռլինկայի» Բեռլինեան հաւաքածոյից է: Նաեւ կցել էր տուեալ հաւաքածոյի վերաբերեալ Եան Պիրոժինսկու հեղինակած «Բեռլինկայ. Եազելոնեան գրադարանի Բեռլինեան հաւաքածոն» խորագրով լեհերէն մի աշխատութիւն⁵:

Յօդուածի նախաբանում հեղինակը նշում է, որ Լեհաստանում պահուող արժէքաւոր ձեռագրեր, հնատիպ գրքեր, երաժշտական նոտաներ, գրաֆիկաներ եւ ատլասներ ընդգրկող Բեռլինեան հաւաքածոյի մասին օտարալեզու մամուլում կան աւելի շատ հրատարակումներ, յիշատակումներ, քան լեհական մամուլում, ուր այդ մասին քիչ է գրուել եւ խօսուել, ամենայն հաւանականութեամբ՝ հաշուի առնելով այն հանգամանքը, որ երկար ժամանակ այդ հաւաքածոն պահուել է խիստ գաղտնի կարգավիճակով:

5 Jan Pirożyński, Berlinka. Zbiory berlińskie w Bibliotece Jagiellońskiej, Dziennik Polski, nr 115 (14877) 21. V., 1993.

1941 թ. աշնանը եւ 1942 թ. դաշնակիցների ուժակոծութիւնների ժամանակ, Պրուսիայի Ազգային գրադարանից դուրս են բերուում խիստ արժէքաւոր (rara i rarissima կարգավիճակի) նիւթեր՝ գրանք աւելի ապահով ամրոցներում եւ վանքերում պահ տալու նպատակով: Այդ հաւաքածոյի զգալի մասը յայտնուում է Դոնլի Ելոնսկում՝ Fürstenstein-ում (ներկայումս՝ Książ, Լեհաստան) Wałbrzych-ի մօտ: 1944 թ. այդ իրերը տեղափոխուում են Grüssau (ներկայումս՝ Krzeszów, Լեհաստան), ուր հաւաքածոն պահուում է մինչեւ պատերազմի աւարտը: Պատերազմից յետոյ հաւաքածոն, ի թիւս այլ նիւթերի, յայտնուում է Եազելոնեան համալսարանի գրադարանավար դոկտոր Ստանիսլաւ Եիերոտուլինսկու (1909-1975) հոգածութեան ներքոյ, ով 1945 թ. դեկտեմբերի 1-ից մինչեւ 1947 թ. ապրիլի 30-ը ստանձնել էր Լուսաւորութեան նախարարութեան պատուիրակի պաշտօնը՝ լքուած եւ թողնուած գրապահոցների նիւթերի յետագայ անվտանգութիւնը ապահովելու նպատակով: Այդ պատուիրակութեան նստավայրը Եազելոնեան համալսարանում էր: Այս մարմնի գործունէութեան ընթացքում յաջողուել է կորստից փրկել միլիոնաւոր գրքեր: Այդ նիւթերի մի մասը, այդ թիւում նաեւ՝ Բեռլինեան հաւաքածոն, 1946-47 թթ. տեղափոխուել է Կրակով: Հեղինակը ընդգծում է Եիերոտուլինսկու եւ նրա գործընկերների անձնուրաց նուիրումը Լեհաստանի գրադարանային գործին՝ մատնանշելով յետպատերազմեան Լեհաստանում այս ասպարէզում գոյութիւն ունեցող դժուարութիւնները: Ոչնչացումից փրկուել էր միայն 1939 թ. ունեցած 22,6 միլիոն հատոր գրքերի մէկ երրորդ մասը: Ամենամեծ կորուստներն արձանագրել է Վարշաւայի Ազգային գրադարանը: 1944 թ. հոկտեմբերի սկզբներին գերմանական իշխանութիւնները այրել էին 50.000 ձեռագիր, մօտ 2,500 հնատիպ (լատ.՝ incunabula), ինչպէս

նաեւ Հարիւրհազարաւոր այլ տիպի յատուկ նիւթեր, որոնք պահուում էին Վարշաւայի Կրաչինսկիների պալատում⁶: Այսպիսով՝ բաւականին լաւ պահպանուած Բեռլինեան Հաւաքածոն յայտնուել էր Եագելոնեան գրադարանում: Հաւաքածոն կանոնակարգուել էր, թողնուել էին հին գոյթահամարները: Այնուհետեւ յօդուածի հեղինակը անցնում է բուն Հաւաքածոյի նկարագրութեանը, թէ ինչ նիւթերից է այն բաղկացած: Բացի, այսպէս կոչուած, «յատուկ» Հաւաքածոյից, այսինքն՝ ձեռագրերից, երաժշտական նոտաներից, Հնատիպ գրքերից, գրաֆիկաներից, քարտէզներից ու ատլասներից, Հաւաքածոն ընդգրկում է նաեւ Համեմատաբար նուազ արժէք ներկայացնող ժ.թ. եւ Ի. դարի լրագրեր եւ գրքեր: 3400 բազմալեզու (այդ թւում՝ արեւելեան լեզուներով) ձեռագրերի մէջ, որոնք ընդգրկում են ԺԸ.-Ի. դարերը, կան հիմնականում եւրոպական, մասնաւորապէս՝ գերմանական մշակոյթի Համար խիստ արժէքաւոր ձեռագրեր: Մեծ կարեւորութիւն է ներկայացնում յատկապէս երաժշտական նիւթերի Հաւաքածոն, որն ընդգրկում է ԺԲ.-ԺԸ. դարերի 200 նոտագիր աշխատութիւն եւ 400 Հատոր ձե-

ռագիր, որոնք պատկանում են այնպիսի երգահանների գրչին, ինչպիսիք են Բրամսը, Բախը, Մոցարտը, Բեթհովենը, Շոբերտը, Շոմանը եւ այլք:

Հաւաքածոյի նկարագրութիւնից յետոյ⁷ հեղինակը շարադրում է Բեռլինեան Հաւաքածոյի յետագայ ողիսականը: 1970-ականներին այս Հաւաքածոյի շուրջ ստեղծուել է իւրօրինակ անառողջ մթնոլորտ: Ժամանակի լեհական իշխանութիւնները, ամենայն Հաւանականութեամբ, այդ Հաւաքածոն դիտարկում էին որպէս առուծախի առարկայ, որը կարելի էր ներկայացնել գերմանական կողմին ապագայ բանակցութիւններում որպէս պատերազմական գործողութիւնների պատճառով լեհական մշակութային կորստի մասնակի փոխհատուցում: Սակայն պատերազմից յետոյ ստեղծուել է գերմանական երկու պետութիւն՝ ազգային երկու գրադարաններով: Արեւելեան Գերմանիայում Բեռլինի Ազգային գրադարանն էր, իսկ Արեւմտեան Բեռլինում՝ Պրուսական մշակութային ժառանգութեան գրադարանը: Սակայն ժամանակի լեհական իշխանութիւնները, ի վիճակի չլինելով կատարել որեւէ ծանրակշիռ քայլ, որոշում են կայացնում գաղտնի պահել Բեռլինեան Հաւաքածոյի՝ Կրակովում գտնուելու փաստը: Այս քայլը Լեհաստանի Համար ունեցաւ իր բացասական հետեւանքները, քանի որ երկար տարիներ Համաշխարհային գիտական միտքը զրկուած էր այս նիւթերն ուսումնասիրելու Հնարաւորութիւնից, ինչն անշուշտ չէր կարող իրողութիւնը բացայայտուելուց յետոյ, չառաջացնել այդ նոյն գիտական աշխարհի զայրոյթը դէպի լեհական իշխանութիւնները: Արդիւնքում՝ բեռլինեան Հաւաքածոյի ճակատագրի մասին յաճախ

6 Վարշաւայում գտնուող Կրաչինսկիների պալատը կառուցուել է 1677-1695 թթ.: Օւենըն աներուել է 1944 թ. Վարշաւեան ապստամբութեան անյաշող փորձից յետոյ: Վերանորոգուել է Երկրորդ աշխարհամարտից յետոյ: Այժմ այնտեղ տեղակայուած է Վարշաւայի ազգային գրադարանի յատուկ հաստատութիւն (ձեռագրերի, հնատիպ գրքերի եւ սրբապատկերների) բաժինը, որտեղ ընդգրկուած են նաեւ հայկական ձեռագրերը: 1961 թ. Լեհաստան գործողուած Մատենադարանի գիտաշխատող Վ. Գրիգորեանը Սկեւոյի Աւետարանը գտնելու նպատակով այցելել է այս գրադարան եւ հանդիպել ժամանակի տնօրէնի հետ, ով նրան ներկայացրել է գրադարանի ունեցած արժէքաւոր նիւթերի կորստի մասշտաբները: Փրկուել էր գրադարանի միայն 2000 ձեռագիր: Հասանական է, որ ոչնչացուած ձեռագրերի մէջ եղել են նաեւ հայկական ձեռագրեր (տե՛ս Վ. Գրիգորեան, Հայկական ձեռագրերի հետքերով, «Գարուն», Երեւան, 1971, թիւ 1, էջ 29-36):

7 Նպատակայարմար չենք համարում սոյն յօդուածում մանրամասնել հայագիտական տեսանկյունից հետաքրքրութիւն չներկայացնող նիւթերի նկարագրութիւնը:

հիւսուում էին իրարամերժ ու երբեմն էլ՝ առասպելական պատմութիւններ, ինչը հարուած էր Լեհաստանի միջազգային հեղինակութեանը: Բնականաբար, նման նշանակութեան եւ քանակութեան արժէքաւոր Հաւաքածոյի գոյութեան փաստը Հնարաւոր չէր երկար ժամանակ գաղտնի պահել: Յարկ է նշել, որ Եագելոնեան գրադարանի աշխատակիցները, իրենց կամքից անկախ, դարձել էին կուսակցական ապարտի անհեռատես քաղաքականութեան զոհը՝ պարտադրուած լինելով լուել բեռլինեան Հաւաքածոյի՝ Կրակովում պահուելու իրողութեան մասին: Թէեւ գրադարանի իշխանութիւնները ժամանակ առ ժամանակ քայլեր էին ձեռնարկում՝ Համոզելու պետական մարմիններին՝ կայացրած որոշման անհեռատես եւ վնասակար լինելու մասին, այնուամենայնիւ, դրանք յաջողութեամբ չէին աւարտուում: Իրավիճակը մասնակի փոխուեց 1965 թ., երբ լեհական իշխանութիւնները Արեւելեան Բեռլինի Ազգային գրադարանին փոխանցեցին հիմնականում լրագրերի եւ ամսագրերի մի Հաւաքածոյ, իսկ 1977 թ.՝ Բախի, Մոցարտի եւ Բեթհովենի ձեռագրերի մի մասը: Սակայն սա Կրակովում պահուող Բեռլինեան Հաւաքածոյի միայն մի փոքր մասն էր: 1975 թ. Եագելոնեան Համալսարանի այդ ժամանակուայ ռեկտոր Միեչիսլաւ Կարաշը Հրաման ստորագրեց, որով Բեռլինեան Հաւաքածոն պաշտօնապէս ընդգրկուեց Եագելոնեան գրադարանի Հաւաքածոյի մէջ, սակայն մի քանի ամիս անց տուեալ որոշումը չեղեալ Համարուեց:

Իրավիճակը փոքր-ինչ փոխուեց 70-ականների վերջին: Եագելոնեան գրադարանը Հարցախեղդ էր արւում արտասահմանի գրադարանների կողմից, որոնք խնդրում էին բացատրութիւն տալ Բեռլինեան Հաւաքածոյի վերաբերեալ ասէկոսէներին: Ի վերջոյ գրադարանի տնօրէնութեանը յաջողուում է ստանալ իշխանու-

թիւնների թոյլտուութիւնը՝ իրագեկելու Բեռլինեան Հաւաքածոյի՝ Կրակովում գտնուելու մասին: Սակայն իւրաքանչիւր որոշում մանրակրկիտ ստուգուում էր իշխանութիւնների կողմից, մինչեւ որեւէ մէկին կը թոյլատրուէր օգտուել այդ Հաւաքածոյից: Յաջորդ կարեւոր բեկումը տեղի ունեցաւ 1981 թ. Հոկտեմբերին. Եագելոնեան Համալսարանի այդ ժամանակուայ ռեկտոր Ի. Ա. Գիբերովսկին յատուկ նիստում որոշում կայացրեց ամբողջութեամբ բացելու Բեռլինեան Հաւաքածոն ինչպէս լեհ, այնպէս էլ օտարազգի գիտնականների Համար: Այդ ժամանակից ի վեր Կրակովը դարձաւ իւրօրինակ «Մեքքա» երաժշտագէտների, պատմաբանների, արուեստաբանների եւ գերմանագէտների Համար, ովքեր գալիս են Կրակով՝ տեղում ուսումնասիրելու Բեռլինեան Հաւաքածոյի Հարուստ նիւթերը, կամ էլ պատուիրում են իրենց հետաքրքրող միկրոֆիլմերը: Եղել են նաեւ երկուստեք Հանդիպումներ գերմանական եւ լեհական գրադարանային ոլորտի աշխատողների միջեւ, ձեռք են բերուել Համագործակցութեան Համաձայնութիւններ: Բնական է, որ գերմանական իշխանութիւնները շահագրգռուած են հետ ստանալ Բեռլինեան Հաւաքածոն, քանի որ այն առաջին հերթին գերմանական մշակութային ժառանգութեան մի մասն է կազմում: Սակայն այս կարգի զրոյցներին որեւէ փոխշահաւէտ ընթացք տալու գործընթացը դժուարանում է, երբ պատկերացնում ենք Երկրորդ աշխարհամարտի ժամանակ Լեհաստանի ունեցած մշակութային կորուստների ահռելի մասշտաբները: Ինչպէ՞ս պէտք է սա փոխհատուցուի: Այս Հարցը մնում է դեռուս անպատասխան:

Սակայն գիտութեան տեսանկյունից ամենակարեւորը Բեռլինեան Հաւաքածոյի մատչելի լինելն է գիտական լայն Հասարակութեանը: Բացի այդ, գիտութեան եւ տեխնիկայի այսօրուայ Հնարաւորութիւն-

ները, անկախ գիտնականի գտնուելու վայրից, որեւէ խոչընդոտ չեն յարուցում պատուիրելու եւ ստանալու Բեռլինեան հաւաքածոյից իրեն հետաքրքրող ցանկացած նիւթ: Այդ առումով կարծես թէ երկրորդ պլան է մղուում այդ հաւաքածոյի գտնուելու վայրը: Այսպիսով՝ պարզ է դառնում, թէ ինչպէս է Բեռլինում պահուող հայկական ձեռագիրը՝ Մաշտոցը, յայտնուել Կրակովում: Ինչ վերաբերում է բուն Մաշտոցի գոյութեան փաստին, ապա հայ մատենագրութեանը վաղուց արդէն յայտնի է Մանուէլ գրչի կողմից Սիւնեաց աշխարհի Շահապօնք գաւառի Կուքի գիւղում⁸ ընդօրինակուած Մաշտոցի մասին: Քանի որ սոյն յօդուածի խնդիրներից դուրս է միջնադարեան գրչակենտրոն համարուող Շահապօնք գաւառի պատմութիւնը ներկայացնելը, նաեւ հաշուի առնելով այն հանգամանքը, որ թէ՛ Շահապօնք գաւառի, թէ՛ նրա առանձին վանքերում գրչութեան կենտրոնների ու դրանց գործունէութեան մասին գոյութիւն ունի մեծ քանակութեամբ մասնագիտական գրականութիւն, ինչպէս նաեւ այն, որ այս բնագաւառում մենք հայագիտութեան տեսանկիւնից ոչ մի նոր տեղեկութիւն չունենք աւելացնելու՝ անիմաստ ենք համարում կրկնել նախորդ ուսումնասիրողների հաւաքած տուեալները: Սահմանափակուենք միայն տուեալ թեմայի վերաբերեալ ուղենշային որոշ մատենագիտական տուեալների հաղորդմամբ⁹: Սոյն յօդուածի նպատակը համարում ենք թեմայով հետաքրքրուող մասնագէտներին տեղեկացնել նախկինում Բեռլինում, այժմ Կրակովի Եագելոնեան համալսարանում պահուող Մաշտոցի գտնուելու վայրի մասին, ինչպէս նաեւ՝ մեր համեստ հնարաւորութիւնների սահմաններում տալ վերոյիշեալ Մաշտոցի առաջին ամբողջական ու հնարաւորինս մանրամասն նկարագրութիւնը:

Ստորեւ ներկայացնում ենք Կրակովի Եագելոնեան գրադարանում պահուող Մաշտոցի նկարագրութիւնը¹⁰:

Ստորեւ ներկայացնում ենք Կրակովի Եագելոնեան գրադարանում պահուող Մաշտոցի նկարագրութիւնը¹⁰:

Կրակովի Եագելոնեան գրադարանի ձեռագիր

Ms. Orient. quart. 336

Մաշտոց

Կոքի գիւղ (Շահապօնեաց ձոր) ՋլսԲ. - 1493

ԳՐԻՉ՝ Մանւէլ: ՍՍԱՅՈՂ՝ Վարդան քահանայ:

ԹԵՐԹ՝ 256: ՊՐԱԿ՝ Բ-ԻԳx12 (Բ 19, Ը 8, Թ 6, ԺԱ, ԻԱ 10, ԺԹ 13, ԻԳ 11)

ՆԻԻԹ՝ Թուղթ: ՄԵՄՈՒԹԻԻՆ՝ 12X17: ԳՐԱԴԱՇՏ՝ 8,5X13,3:

ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ բոլորգիր: ՏՈՂ՝ 18: ԿԱԶՄ՝ մուգ դարչնագոյն կաշի (յետագայի), միջուկը՝ տախտակ, աստաղը՝ կարմիր կտաւ:

Պահպանակ 1 տպագիր թերթ սկզբից, հայերէն, երկսիւն, (18 սիւն), հնութիւնից խունացած, վրան տեղ-տեղ անցքեր: Հատուած Յայսմաւուրքից՝ Ա թերթ՝ Վասն քարոզելոյ սուտ Բարդադ, որ էր նաքովը զբանս ճշմարտին: Զոր հոգին սուրբ յայտեաց այն կախարդին Ժէ. Ասաց ոմըն նրմա «Թէ դու Բարդամես... Լալով ըզմիմեանս համբուրեցին, ելեալ Բարդամ գնաց յիւր

¹⁰ Մեր խորին շնորհակալութիւնն ենք յայտնում Մատենադարանի գիտաշխատող Դաիթ Ղազարեանին Մաշտոցի նկարագրութեան խմբագրական աշխատանքների համար:

⁸ Ներկայումս Նախիջեանի Օսթրոպ շրջանի Քիւքի գիւղն է:

⁹ Տե՛ս Հ. Ղ. Ալիշան, Սիւսկան. Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վեներիկ, 1893, էջ 486-487. Գ. Յովսէփեան, Խաղարկեանք կամ Պոռեանք Հայոց պատմութեան մէջ, Բ հրատ., Անթիլիաս-Լիբանան, 1969, էջ 372-3. Ա. Այվազեան, Օծոփի եւ Կուքիի յուշարձանները, ՊԲՀ, 1976, թիւ 2, էջ 257-265. Գ. Տէր-Վարդանեան, Թովմա Մեծոփեցու նորայայտ՝ Աստուածածնի աւետման նախասօնակի ճառը, «Էջմիածին», 2008, թիւ 12, էջ 29-30:

անապատին: Յանապազ աղօթէր վասն Յովսափին, որ //ատեսցի յաղբից մարմնային: Բ թերթ՝ Յայնժամ հրաժարեցոյց ի սատանայէ. Զերրորդութիւն սուրբ... եղեալ ի գերեզման կամաւորկան յարեալ ի մեռելոց Աստուած անվախճան ՃնԳ ելեալ:

ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹԻՆ՝

Ճակատագարդ՝ 2ա, 34ա, 43ա, 61բ, 95ա, 98ա, 128ա, 151ա, 167բ, 206ա, 246ա: Վերջագարդ՝ 27ա: Լուսանցագարդ. թոչուն՝ 43ա, 61բ, 98ա, 114ա, 206ա, 246ա. խաչ՝ 2ա, 128ա, բուսական՝ 34ա, 151ա, 168բ. վարդեակ՝ 55ա:

Զարդագիր՝ Հանգուցագիր (26ա, 28ա, 227բ, 246ա), բուսական (34ա, 43ա, 55ա, 77բ, 86ա, 95ա, 114ա, 168բ, 195ա, 61բ, 98ա, 110բ, 120բ, 128ա, 151ա, 206ա, 220բ), թռչնագիր (168ա): Գոյնէր՝ կարմիր, դեղին, սև: Խորագրերն ու սկզբնատառերը՝ կարմիր:

ՎԻՃԱԿ՝ բաւարար, սկզբից եւ վերջից պակասաւոր (տե՛ս Բովանդակութիւն): Պահպանուել են ձեռագրի հին կազմի մնացորդները, որոնք տեսանելի են նոր կազմի կաշուի տակից: Կազմի երկու կապիչները եւ գամերը, թիկունքի վերին հատուածի կաշին մասամբ ընկած: Խոնաւութիւն տեսած, թուղթը գունափոխուած, թանաքը տեղ-տեղ խամրած: Թ. 45-85 վերին արտաքին անկիւններն ընկած, լրացուած այլ թղթով յետագայ նորոգման ժամանակ՝ դրազաշտի լրացումով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՆ

ա. 1ա-25բ Կանովն մկրտութեան - //...զհատուցումն ըստ իւրաքանչիւր գործոց... Եւ ասէ զԱղաւթս զայս. Տէր Աստուած մեր...

բ. 25բ-27ա (Թագ վերացուցանելոյ) - Եւ յաւուրն ութերորդի տանին նորընծայն յեկեղեցին եւ վերացուցանէ քահանայն զթագն եւ ասէ զաղաւթս զայս...

գ. 27ա-33բ Կանովն Աշան արհնել (Նշան արհնել) - Պարտ է նախ քահանայն ընտրել կանոնաւք զփեսայն եւ զհարսն զի մի լիցին ազգակից միմեանց...

դ. 34ա-42բ Կանոն զհանդերձ հարսանեաց արհնելոյ- Բերեն առաջի քահանային եւ ասեն Շարական ինչանչան դրոշմամբ... ապա Սաղմոս. Կին քո որպէս այգի փոխ երանի ամենեցուն ոյք երկնչին ի Տեառնէ եւ դնանի. Ընթերցուած յԱռակաց...

ե. 43ա-53բ Կանովն պսակ դնելոյ- Բերեն յեկեղեցին եւ ասեն Սաղմոս. Տեր ի զաւրութեան քում. Ընթերցուած ի Մընդոց...

զ. 53բ-54բ Կանովն վերացուցանելոյ զպսակն- Յաւուրն ութերորդի ասեն Սաղմոս ի թիւ ԽԳ. Բղիսեցէ սիրտ իմ զբան բարի...

է. 54բ-61ա Կանոն հաղորդ տալոյ - Առնու քահանայն զփրկական խորհուրդն եւ երթայ առ հիւանդն...

ը. 61բ-86ա Կանոն համարելն Անջեցելոց- Յուղարկելոյ առ Քրիստոս... Ասեն Սաղմոս. Երկինք պատմեն զփ աւրհնութիւն ես ասացի քարոզ վասն ի վերուստ խաղաղութեան եւ ասէ զԱղաւթս զայս...

թ. 86ա-93ա (Այգելացն) Այգուն գան ի գերեզմանն եւ ասեն Սաղմոս. Եղիցի ականջ քո. Փոխ ի խորոց կարգացի...

ժ. 94ա (ուշ շրջանի աւելացում) Ով զարմանալի խորհուրդ այս մեծ յայտնեալ արարիչն Աստուած ի Յորդանան եկեալ...

ժա. 95ա-97բ Կանոն եւթնետրորդ ատուրն - Երթան ի գերեզմանն եւ ասեն Սաղմոս. Կցուրդ. Երանելի են, որք բնակեալ...

ժբ. 95ա-110բ Կանովն զամենեան վաղճանեալ տղայս յուղարկելն առ Քրիստոս- Ասեն Գուբուղ այս Դ. - Առ քեզ, Տեր, համբարձի...

ժգ. 110բ-114ա (Այգելացի) Այգուհի Առաւելուհի երթան ի գերեզմանն: Ասեն Սաղմոս. Եղից անուն...

ժդ. 113բ-119բ Կանովն ոգեհանգիստ առնելոյ կամ պատարագ մեղելոյ- Ասեն Սաղմոս ԼԲ. Երանի ում թողուցիւն...

ժե. 119բ Արհնութիւն աղի - Ասեն Սաղմոս ի թիւ. Աստուած ողորմեայմ և ասէ. զԱղաւթս...

ժզ. 120ա-124բ Կանոն տերուակակաւ արհնելոյ- Ածեն զնկիրեալսն ի դուռն եկեղեցոյն... ասեն Սաղմոս ի թիւ. Երանի ում թողուցիւն...

ժէ. 125ա-151ա Կանովն խաչ արհնելոյ - Յետ հակմանն տանին յեկեղեցին լուսանան նախ ջրով... Ասեն Սաղմոս ի թիւ. Լուր, Աստուած, աղաւթից իմոց...

ժը. 151ա-167ա Կանոն Ջրարհնելոյ - Ասեն Սաղմոս ԻԸ. (մասամբ ջնջուած, անընթեռնելի)

ժթ. 167բ-187ա Կանոն մեծի Հիգզարթին Ոտնայլուայի. ըստ որում ասացն Յիսուս, եթե. Արհնակ մի ետ ու ձեզ: Ջոր արարեալ է Տեառն Եփրեմի խորիմ Ասորոյ, զոր թարքմանաց սուրբ Դպրապետն Հայոց Գրիգորիոս Վկայաւերն - Ի տասներորդ ժամուն զկնի Սրբոյ պատարագի ...

ի. 187ա-194բ Եւ ապա հսկումն մտանեն քարոզ պատուիրանին. զեկուցանէ քահանայն ժողովրդեանն, առեալ զսուրբ Աւետարանն ի գիրգս իւր ելանէ ի բեմն և կարկառեալ զձեռն ասէ զԱղաւթս զայս. Լուարուք ինձ, որդեակք իմ, և ես զեկուցանեմ ձեզ աննախանձաբար իբրև հարազատ և սիրելի որդոյ...

իա. 195ա-205բ Կանովն ապաշխարող առնելոյ - Տարցէ քահանայն զխոստովանողն ի դուռն եկեղեցոյն Եւ ասեն Սաղմոս ի թիւ. Որպէս փափաքէ եղջեր...

իբ. 206ա-220ա Կանովն Հիգզարթին զապաշխարան արձակելոյ - Յերրորդ ժա-

մուն ժողովէք քահանայն զապաշխարողսն...

իգ. 220բ-227ա Հանգիստ երանելոյն Յոհաննու եւ աւետարանչիմ Քրիստոսի - Էր ընդ եղբարսն երանելին Յոհաննէս մեծաուրախութեամբ ի Տեր և յաւուրս կիրակէի խաւսել սկսաւ այսպէս. Եղբարք իմ և ժառանգակիցք և ծառայակիցք իմ...

իդ. 227բ-239ա Կանոն վասն պղծեալ տաճարի յանօրհնաց - Գիշերն հսկումն առնեն ի նոյն եկեղեցին եւ ի ժամ ճաշոյն ասեն Սաղմոս ՀԸ. Կցուրդ. Աստուած. մտին հեթանոսք զգործողայն ի բուն և ապա սարկաւազն քարոզէ. Խնդրեսցուք հաւատով միաբանութեամբ և եպիսկոպոյսն ասէ զԱղաւթս, որ ընդունողդ ես աղաւթից ժողովրդեան քո Քրիստոս Աստուած մեր, որ կան առաջի քո...

իե. 239բ-245բ Կանոն աւագան արհնելոյ - Որ ունի զսկիզբն փրկութեան շնորհին վերջստին ծնանելոյ յորդեգրութիւն Աստուծոյ և ասէ. Կարգավորութիւն սորին հաստատեն զաւագանն ի տեղոջ իւրում...

իզ. 246ա-251ա Կանոն զարմտիս սերմանց զձեղջն և զհնձան արհնելոյ - Սաղմոս Կցուրդ. Հովիտք քո բազում արասցեն ցորեանաց... Ընթերցուած յԱռակաց...

իէ. 251ա-252ա Աղաւթս վասն երաշտութեան - Տեր Աստուած մեր, որ յաղագս առ քեզ նախանձու լուար Եղիայի մարգարէին ըստ ժամանակի արձակելոյ անձրև...

իը. 252ա-253բ Կանոն պղծեալ կերակրոյ, թէ ոք ուտիցէ տանկազէն կամ ի գոհից հրէից և ճեթանոսաց - Ասեն Սաղմոս Կցուրդ. Սիրտ սուրբ... եւ ասէ զԱղաւթս. Տեր Աստուած մեր, որ սուրբդ ես և ի սուրբս հանգուցեալ փառաւորեալդ յամի...

իթ. 254ա-254բ Աղաւթս ի վերայ երդման սղալանացն - Տեր Աստուած, որ զմարդոյ զբնութիւն փոփոխական եւ տկար գիտես եւ զառ ի մտածութենէ մերմէ զխորհուրդս ճշմարտապէս ճանաչես եւ զառ ի

խաբեութենէ մերմէ եղեալս անոխակալ (երդմանհարի)

լ. 254բ-256ա Կանոն սկի և մաղմայ արհնելոյ - Տանեն յեկեղեցին առ սուրբ սեղանն եւ լուսանան նախ ջրով և ապա գինով... Եւ ասէ զԱղաւթս. Աւրհնեալ ես, Տեր Աստուած մեր, որ ետուր մեզ զնիւթս...

Յաւելագրութիւն

ԺԸ. դար, անարհեստ անտրգիր

ա. 94ա (Աղոթք) - Ով զարմանալի խորհուրդ... Արդ աւրհնեալ է Հայր և համագոյն...

բ. 94բ Գիր գուլճի Անուն Աստուծոյ աթանի Այս աթան ի սյաթ Սալիայ աթասալի Աստուծոյ հասէք անգնութիւն ծառայիս Աստուծոյ:

գ. 256բ Այլ գիր ջերմ/// քս է միայնութող վասն սուրբ կուսիս վասն այսպէս միայնութող վասն Քրիստոսի ասէ. Միայնութող վասն բո/// ին Մարիամայ Աստուածածին կապա///:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

57բ (ստ. լս.) ԶԱզարիայ կրօնաւորն յիշեցէք ի բարի///, որ զմեզ մեղրով քաղցրացոյց:

76բ-77ա (ստ. լս.) Այսպէս աւրհնեն զհողն յիշեա Տեր զհոգի ննջեցելոյս և աւրհնեա զհողս զայս:

93ա (ստ. լս.) Զանպիտան գրիչս՝ զՄանէլս, աղաչեմ յիշել ի Տեր Աստուած կենդանին:

93բ Ա՛րդ, աղաչեմ զընթերցաւոր սորայ յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զՏաթլուս և զհայրն իւր՝ զՎարդան, և զմայրն իւր՝ զՀռիփսիմէն, և զամենեան արեան մերձաւորսն իւր. ամէն: Եւ զԱզա-

մաթ աղախինն Աստուծոյ յիշեցէք ի Տեր, որ Մաշտոցիս ընծայ երես մէկ գինդ, որպէս այրին, որ ցանկացաւ գանձանակին Քրիստոսի և ընկալաւ զհատուցումն ըստ փափազանաց ի տեառնէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն:

194բ Զեռն գընայ ու հող դառնայ, Գիրս մնայ հաստատ կեանայ. Ով հանդիպի, զգիրս այս կարդայ, Նայ զիս յիշէ ու ինձ ողորմայ, Որ ես մեղաք խաւարեցայ պատուիրանացն հեռացայ աչից լուսոյս պակասեցայ Արիութեանց տկարացայ արքայութեան կարաւտացայ Ես անարժան Մանէլ ծառայ ով ընթերցաւոր քայս կարդացէք ինձ թողութիւն մեղաց հայցէք դուք յԱստուծոյ պարգևս առնէք ով զմեզ յիշման արժան առնէք:

220ա Տե՛ր, Աստուած իմ Յիսուս Քրիստոս, քո ամենայն սուրբ երկնաւորաց և երկրաւորաց բարեխաւսութեամբ ողորմեայ ստացողի սորայ Վարդան քահանային և ծնողաց իւրոց, և ինձ անպիտան գրչիս Մանէլիս. ամէն:

256բ Փառք ամենասուրբ Երրորդութեանն. ամէն. Հաւր անեղին և Որդոյն միածնի Հոգոյն ճշմարտի այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն: Գրեցաւ Մաշտոցս ձեռամբ բազմամեղ և փցուն գրչի՝ Մանէլի ի |256բ| ձորս Շհապունեաց՝ ի գեաւղս Կոքի կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ եկեղեցեացս և սուրբ Խաչերոյս և Վարդանանց սուրբ նահատակացս, ի թվականիս Հայոց ԶԽԲ. (1493) ի ժամանակին որ ընդստամ անուն փատշահ կանկնեցաւ և գնաց ի վերայ Շարվանայ: Զըստացող սորայ՝ գտեր Վարդան քահանայ՝ զսրբասէր և առաքինի, որ յոյժ փափազանաւք ետ գրել զՄաշտոցս յիշատակ իւր և ծնաւդաց իւրոց. հաւրն իւր՝ Մուրատին, և մօրն իւր՝ Խոնտխաթունին, և մաւր քերն՝ Թա-

ղամէլիքին, և ամենայն արեան մերձաւորաց իւրոց, ի վայելումն որդոց իւրոյ՝ Վանական քահանային և Անտոնին:

227ա Ով երանելի սուրբ առաքեալ և աւետարանիչդ Քրիստոսի Յոհաննէս բարեխաւսեա առ Քրիստոս վասն ստացողի սորին՝ տեր Վարդան քահանայի, և գծողի սորին՝ անարժան ծառայի Մանէլի, զի զմեզ արժանի արասցէ իւր միւսանդամ գալըստեանն. ամէն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

94բ (1691 թ., նոտրդիր) Եղիազար կաթողիկոս, որ հանգեալ առ Քրիստոս փոխեցաւ. Նահապետ վարդապետ, կաթողիկոս օրհնեցին թվին ՌՃԽ. (1691) էր:

97բ (ԺԸ. դ., նոտրդիր) Ես մեղաւոր Վարդան էրէցս գնեցի Աւաքն ի անաւրինաց ձեռանէ և ազատեցի իմ կամ[աւք]:

227ա (ԺԸ. դ., նոտրդիր) Յիշեցէք ամիրն, կողկիցը՝ Սափին, որդին՝ Մկրտիչն, Եղիազարը, Պատալն, Արութին, Ալլահվեդին, տուղը՝ Խանում, Հէղինարի եւ ամենայն արեան, ով յիշէք Աստուած ողորմի ասէք:

ԿՆԻՔ՝ 1ա (ստ. լս.)՝ շրջանաձեւ, <<Ex Biblioth. Regia Berolinensis>> մակագրութեամբ (կարմիր թանաքով): 256բ

(արտ. լս.) ուղղանկիւն, <<Bibl. Reg. Berol.>> մակագրութեամբ (կարմիր թանաքով):

ԳՐՉԱՓՈՐՁ՝

27բ (ձախ. լուս.)

187ա (ԺԸ. դ., անարհեստ նոտրդիր, մուրհափ) է. Ես Եղազրս... (աջ լուս., դժուար ընթեռնելի):

117բ-118ա գրչափորձ (ստ. լուս.)

82բ գրչափորձ (ձախ. լուս.)

ԿՇՈՒՄ՝ Կազմի թիկունքին փակցուած թղթիկին <<Armen>>, որից ներքեւ՝ կարմիր թուղթ՝ ոսկեգոյն տառերով. <<Ms. Orient. Quart 336>>: Ա փեղկի ներքին հատուածում՝ կարմիր աստառի վրայ, փակցուած 2 թուղթ գերմ. գրութեամբ: Առաջին գրութիւնը հաւանաբար անունազգանուն է, չի ընթերցուում: Երկրորդ գրութիւնը. <<Nr. 58, Das Buch Maschtog et i das Ritualier buch der arm. Kirche, Geschriben im Jahre 1493 n. Ch.>>: 1ա (վերին լուսանցքում) Acc. 2449 ms. Orient qua. (սեւ թանաքով): 1ա (վերին լուսանցքում) ms. Orient. quart. 336



ասցեն ճատուցող քստորայ
 ակնունել ուղիք են բարեաց
 4 ատուցման: Եւ զմեզ արժ
 անի արայ պաշտել զքեզ զամ
 աւուրս կենաց մերոց քսմաճ.
 քնդորու մկաւր մի անգա
 մայն և կողբող սրբոյ վայ
 ելէ փառք ի շխանու մի և
 պատիւ այժմե մի շտեյաւ
 հտեանս յաւիտենից:
 ասք ամենաւրէր որոյ ու
 թենամէն. հաւրանելին. և
 որոյն մի անունն. հոգոյն ճշմար
 տի. այժմե մի շտեյաւ հտեանս
 յաւիտենից ամէն: Երեցաւ
 մաշտոցս ճեռամբ քազմա
 մեղեփոցուն գրչի մանս էլ ի ի

256

ճոսս ասցունել այ ի զե ասցունել
 թիկր էցեալ. ընդ մովանեա
 ւք եկել էցեացս և արեալ էր յա
 նաւոր անանց արեալ ասուակ
 այս. ի թմկն ի սեւայոց. Չիք.
 ի ժամանակ ի սորոս ըստամ
 անուն փառշաւ կանկն էցաւ
 և զմաց ի զրշարլ անայ. Չստ
 այոյ սորայ զտր վարդ անքիչ
 զսրբաւեր և առ արինի որոյ յոյժ
 փափագ անաջ է տգրէ զմայն
 սցս յիշատակ ի ր և ճնաւ զա
 ցիւրոց. հարմիր մտքս առին.
 և մօրն ի ստուտի սաթուն ին
 և մարք էրն թաղամէ շիքին և
 ամարեան մեր ճաւորացի ր
 սց. ի վայելու մտքոց ի սոյ.
 փմնակ անքիչ ին և անտուն ին.
 256
 ասցունել այ ի զե ասցունել
 թիկր էցեալ. ընդ մովանեա
 ւք եկել էցեացս և արեալ էր յա
 նաւոր անանց արեալ ասուակ
 այս. ի թմկն ի սեւայոց. Չիք.
 ի ժամանակ ի սորոս ըստամ
 անուն փառշաւ կանկն էցաւ
 և զմաց ի զրշարլ անայ. Չստ
 այոյ սորայ զտր վարդ անքիչ
 զսրբաւեր և առ արինի որոյ յոյժ
 փափագ անաջ է տգրէ զմայն
 սցս յիշատակ ի ր և ճնաւ զա
 ցիւրոց. հարմիր մտքս առին.
 և մօրն ի ստուտի սաթուն ին
 և մարք էրն թաղամէ շիքին և
 ամարեան մեր ճաւորացի ր
 սց. ի վայելու մտքոց ի սոյ.
 փմնակ անքիչ ին և անտուն ին.

256